

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #2

Փետրվար 2017

Երևան, Հայաստան



Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Սննդի վերամշակում	3
Տեքստիլ արտադրություն	6
Շինարարություն	8
R&D	10
Տեղեկատվական տեխնոլոգիաներ.....	11
Կոսմետիկա.....	13
Դեղագործություն	14
Այլ ոլորտներ	16
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	19
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	21

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-երի միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՑ Հայաստանը ուշադրության է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

Մենդի վերամշակում



Գործարար համագործակցության առաջարկներ

Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Իսպանական ընկերությունը, որը մասնագիտացած է ձեռագործ մրգային ջեմերի մշակման ոլորտում, առաջարկում է 100% բնական մրգային ջեմեր սերկնիլից և սալորից՝ խառնած նարնջի, շոկոլադի և ընկույզի հետ: Ընկերությունն նաև ունի օրգանական և առանց շաքարի (ֆրուկտոզայով) արտադրանք: Արտադրատեսակներն առանց գլյուտենի են և բուսական: Ընկերությունը Եվրոպայում և այլ երկրներում փնտրում է գործընկերներ՝ տարածման համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ընկերությունը փնտրում է դստերիբյուտոռներ

Հունական ընկերությունը, որն արտադրում է տնական մարմելադ, քաղցրեղեն, ծաղկային մեղր և մեղվամոր կաթից արտադրանք, լավ հաստատված է հունական շուկայում: Այն փնտրում է նոր գործընկերներ Եվրոպայում՝ իր շուկան ընդլայնելու նպատակով: Ընկերությունը հետաքրքրված է երկարատև տարածման համաձայնագրերով:

Ծածկագիր. BOGR20161102001

Ընկերությունը փնտրում է նոր շուկաներ

Հունական ընկերությունը, որը մասնագիտացած է ստանդարտ և առաջին մգվածքի ձիթապտղի յուղի, քուսպի, ձիթապտղի, ձիթապտղի մածուկի, ձիթապտղի օձառների արտադրության և առևտրի ոլորտում, փնտրում է նոր շուկաներ իր արտադրանքի համար և փնտրում է դիստրիբյուտորներ ու գործակալներ:

Ծածկագիր. BOGR20150430001

Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Հունական ընկերությունը, որը գործում է սառեցված խմորեղենի և շաքարից պատրաստված քաղցրեղենի արտադրության ոլորտում՝ կարկանդակներ, պիցցաներ, դոնաթսներ և շերտավոր խմորներ, փնտրում է դիստրիբյուտորներ: Ընկերությունը ցանկանում է ընդլայնվել նոր շուկաներում և ստորագրել երկարատև համաձայնագիր՝ փորձառու դիստրիբյուտորների հետ, ովքեր ունեն մեծ առևտրային ցանց:

Ծածկագիր. BOGR20161021002

Գործարար համագործակցության հարցումներ

Մենդանթերքի ոլորտում գործող ընկերությունը փնտրում է օրգանական բաղադրիչների մատակարարներ

Ընկերությունը փնտրում է բուսական արտադրանքի մատակարարներ

Լեհական ընկերությունը, որն աշխատեցնում է Լեհաստանում ամենամեծ բուսական սննդի շուկան, ինչպես նաև՝ օնլայն խանութը, փնտրում է 100% օրգանական բուսական ապրանքներ, ինչպես օրինակ՝ սնունդ, կենդանիների սնունդ և այլն՝ ընկերության պորտֆելը ընդլայնելու նպատակով: Ընկերությունը հատկապես հետաքրքրված է եգալի և յուրօրինակ արտադանքով: Ընկերությունն առաջարկում է տարածման ծառայություններ կամ այլընտրանքային արտադրական համաձայնագրեր՝ մասնավոր պիտակով:

ՓՄՁ-ն, որը գործում է սննդի ոլորտում, փնտրում է սննդային բաղադրիչներ արտադրողներ

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է սննդի բաղադրիչների վաճառքի և տարածման ոլորտում, փնտրում է սննդային բաղադրիչներ արտադրողներ: Բաղադրիչները նախատեսված են վաճառքի համար: Ընկերությունը փնտրում է բիզնես գործընկերներ և առաջարկում է իրեն հանդես գալ իբրև դիստրիբյուտոր կամ գործակալ: Երկարատև և հարուստ փորձի շնորհիվ, ընկերությունն առաջարկում է բարձր մակարդակի համագործակցություն:

Ծածկագիր. BRPL20161129001

Սառեցված տավարի, խոզի, հավի և հնդկահավի միս արտահանողը փնտրում է մատակարարներ

Կիպրոսյան ընկերությունը, որի հիմնական գործունեությունը սննդամթերքի (սառեցված միս, ձուկ) արտահանումն է, փնտրում է արտադրողներ/մատակարարներ, ինչպես նաև տավարի, խոզի, հավի, հնդկահավի մսի սպանդանոցներ Եվրոպայում, որոնց ընկերությունը կարող է տրամադրել իր տարածման կամ գործակալական ծառայությունները:

Ծածկագիր. BRCY20160318001

Ընկերությունը փնտրում է առողջ և հեշտ պահվող սննդամթերք

Ընկերությունը, որը ցանկանում է ընդլայնել իր ապրանքների տեսականին, որոնք բարձրորակ են և համարվում են առողջ, պիտանի, բայց ոչ պարտադիր, կարող են շուկայահանվել իրենց ապրանքանիշի ներքո: Ընկերությունը փնտրում է արտադրողներ և դիստրիբյուտոր գործընկերներ:

Ծածկագիր. BRHU20150713001

Տեքստիլ արտադրություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Արտադրողն առաջարկում է ենթապայմանագրային համագործակցություն/մասնավոր պիտակով արտադրություն

Դիզայներական հագուստ արտադրողը Լատվիայից առաջարկում է ենթապայմանագրային համագործակցություն այն ընկերություններին, որոնք փնտրում են մասնավոր պիտակով նորաձև հագուստ արտադրողների: Ընկերությունն առաջարկում է արտադրել 2 հավաքածու մեկ տարվա ընթացքում:

Ծածկագիր. **BOLV20160209003**

Ընկերությունն առաջարկում է իր ապրանքներն ու հարակից ծառայությունները

Ռումինական ընկերությունը, որն արտադրում է պոլիվինիլքլորիդային կտորեղեն տեքստիլե ներդիրներով, ներառյալ՝ գովազդային վահանակներ, վրաններ, բեմեր, պահեստներ, անջրանցիկ բրեզենտ երկաթուղային վագոնների համար և նմանատիպ արտադրանք, առաջարկում է ապրանքներ հաճախորդի դիզայնով: Անհրաժեշտության դեպքում ընկերությունը կարող է առաջարկել նաև դիզայն, հույժ և մատակարարում: Ընկերությունը փնտրում է համագործակցություն ցանկացած ՁԵՑ երկրում՝ արտադրական համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. **BORO20161118001**

Արտադրողը և դիստրիբյուտորը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ

Իտալական ընկերությունը, որը գտնվում է Հարավային Իտալիայում (Նապլես), մասնագիտացած է էլեգանտ և ռճային կանացի հագուստի արտադրության և տարածման ոլորտում և փնտրում է գործակալներ, դիստրիբյուտորներ: Ընկերության արտադրանքը

տեխնոլոգիապես բարձրորակ սարքավորումների և ավանդական արհեստագործական փորձի արդյունքն է:

Ծածկագիր. BOIT20150720001

Ռուսական ընկերությունը փնտրում է գործընկերներ

Ռուսական ընկերությունը Կուրսկի տարածաշրջանից, որն արտադրում է հագուստ նորածինների և փոքր տարիքի երեխաների համար, փնտրում է գործընկերներ՝ վաճառքի և տարածման ոլորտում: Ընկերությունը փնտրում է գործընկերներ ԵՄ և ԱՊՀ երկրներում՝ տարածման ծառայությունների ներքո համագործակցելու համար:

Ծածկագիր. BORU20151130001

Դիզայները փնտրում է դիստրիբյուտորներ

Կատալոնյան (Բսպանիա) ընկերությունը, որը մասնագիտացած է կանացի նորածն հագուստի, ոճային կենցաղային տեքստիլի, մանկական տեսականու և զարդերի արքեսուարների նախագծման, արտադրության, մեծածախ վաճառքի և առցանց վաճառքի ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ կամ գործակալներ՝ իր հավաքածուները ողջ աշխարհում առևտրականացնելու նպատակով:

Ծածկագիր. BOES20150414002

Տեքստիլի ոլորտում գործող ընկերությունն առաջարկում է ենթապայմանագրային համագործակցություն և փնտրում է արտադրական համաձայնագրեր

Տեքստիլի ոլորտում գործող լեհական ընկերությունը, որն արտադրում է հագուստ հիմնականում եվրոպացի հաճախորդների համար, այժմ փնտրում է արտադրական համաձայնագրեր և ենթապայմանագրային հնարավորություններ:

Ծածկագիր. BOPL20150220002

Գործարար համագործակցության հարցումներ

Ընկերությունը փնտրում է մրցունակ և մշակման համար նախատեսված կտորեղեն (չյուսված, նեյլոնե, սպանդեքսից և բամբակյա)

Գերմանական ընկերությունը, որը գործում է ճանապարհորդական ոլորտի գովազդային նյութերի արտադրության ոլորտում, փնտրում է գործընկերներ, որոնք հետաքրքրված են

հատուկ տեքստիլ ապրանքների արտադրությամբ և տեքստիլի վրա տպագրությամբ՝ որպես ենթակապալառու և արտադրող գործընկեր:

Ծածկագիր. BRDE20160727001

Կենցաղային տեքստիլ արտադրողը փնտրում է գործված կտորեղենի մատակարարներ

Իսպանական ընկերությունը, որը մասնագիտացած է կենցաղային տեքստիլի արտադրության ոլորտում, ցանցի բոլոր երկրներում փնտրում է 100 տոկոսանոց պոլիէսթերի գործվածքի մատակարարներ՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BRFR20160307001

Շինարարություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Տրանսպորտային և այլ միջոցների համար ֆիլտրեր արտադրողն առաջարկում է իր ապրանքները

Բուլղարական ընկերությունը, որն արտադրում է տարբեր տիպի ֆիլտրեր՝ օդի, յուղի, վառելիքի, ինքնաթիռի խցիկի օդի, հիդրավլիկի և փոշու համար, առաջարկում է իր ապրանքները պոտենցիալ գործընկերներին՝ ավտոպահեստամասերի, գյուղատնտեսական և հատուկ մեքենաների, շինարարական սարքավորումների և օդափոխման համակարգերի ոլորտներում գործող դիստրիբյուտորներին: Ընկերությունը նաև առաջարկում է մեքենաների տարբեր մասեր, որոնք հարմար են վերը թվարկված մեքենաներում և սարքավորումներում կիրառելու համար: Ընկերության նպատակն է կնքել երկարատև տարածման համաձայնագրեր:

Ծածկագիր. BOBG20150611001

Արտադրողն առաջարկում է իր ծառայություններն իբրև ենթակապալառու

Բուլղարական ընկերությունը, որը մասնագիտացած է պողպատից, չժանգոտող պողպատից, ալյումինից և արույրից մետաղական մասերի և բաղադրիչների CNC (Համակարգչային թվային հսկողություն) մետաղագործության ոլորտում, առաջարկում է իր փորձն իբրև ենթակապալառու՝ մեքենանների տարբեր մասերի, ներառյալ բարձր ճշգրտությամբ արտադրությունը: Ընկերությունն արտադրում է նաև ադամանդի առանցքի համար թաց և չոր գայլիկոնիչներ՝ իր ապրանքների տարածման համար:

Ծածկագիր. BOBG20150610001

Շինությունների համար բաղադրյալ նյութեր արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Ռուսական ընկերությունը Մորդովիայից արտադրում է շինությունների և շինարարության մեջ կիրառվող տարբեր տիպի ապրանքներ, օրինակ՝ ապակե մանրաթելերից կմախքներ, կոմպոզիտային ձողեր և ամրաններ: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BORU20160404010

Ընկերությունը փնտրում է արտադրական և տարածման ծառայությունների համաձայնագրեր

Ռուսական ընկերությունը Պերմի տարածաշրջանից մասնագիտացած է փայտանյութերի և փայտյա կաղապարների արտադրության ոլորտում: Ընկերության հիմնական ուղղությունները հետևյալն են. խորը վերամշակում, տախտակների և այլ փայտանյութերի սղոցում, փայտից արված իրերի չորացում, մեծածախ և մանրածախ վաճառք, երկրի այլ տարածաշրջաններ արտահանում: Ընկերությունը հետաքրքրված է արտադրական և տարածման ծառայությունների համաձայնագրերով:

Ծածկագիր. BORU20151126003

Մետաղական պարագաներ արտադրողն առաջարկում է իր ծառայությունները

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է կախովի առաստաղների համար նախատեսված մետաղական արքեսուարների արտադրության ոլորտում, ինչպես նաև արտադրում է շենքերի ինտերիերների, կայծակի պաշտպանության սարքերի, պողպատե կառուցվածքների էլեմենտներ և էլեկտրական ցանցերի պարագաներ, փնտրում է դիստրիբյուտորներ՝ իր ապրանքները վաճառելու նպատակով: Միննույն ժամանակ այն առաջարկում է իր արտադրական ծառայություններն իբրև ենթակապալառու:

Ծածկագիր. BOPL20160121001

Ինժեներական արտադրանք

Չեխական ինժեներական ընկերությունն առաջարկում է իր ազատ արտադրական հնարավորությունները արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով: Ընկերությունը մետաղագործական արտադրանքի համար առաջարկում է եռակցման մամլիչներ, դարբնամամլիչներ, տեխնոլոգիական մասեր, հղկող մեքենաներ,

օֆշորային պողպատե կառուցվածքներ և սարքավորումների մասեր:

Ծածկագիր. BOCZ20151207002

Գործարար համագործակցության հարցումներ

Արտադրողը փնտրում է փայտյա դետալներ արտադրողներ

Չեխական ընտանեկան ընկերությունը, որն արտադրում է ձուլվածքներ ամուր փայտից, փնտրում է փայտյա դետալների նոր մատակարարներ: Մասնավորապես ընկերությունը փնտրում է փայտամշակման ոլորտում հետագա մշակման համար եզրավորված փայտյա նրբատախտակներ, եղնուց փայտյա տախտակները միավորող (F) նյութ և քառակողմ սոճու պարզ տախտակներ: Ընկերությունը ցանկանում է համագործակցել արտադրական կամ ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRCZ20160210001

Արտադրողը փնտրում է ենթապայմանագրային կամ արտադրական համաձայնագրեր

Գերմանական ինժեներական ընկերությունը մշակել է նորարարական հնձող սարքավորում, որը նախատեսված է ադապտացված բազմակի կիրառման համար: Այժմ նրանք փնտրում են առանձին մասերի և բաղադրիչների, օրինակ՝ շարժակների, աղացների, շրջող բաղադրիչների, կրակով կտրող մասեր (լազերային), վարելու տեխնիկայի, ձկուն մալուխների, եռակցման հավաքվածքների, ինժեներական պլաստմասսայի մատակարարներ: Ընկերությունը փնտրում է արտադրական կամ ենթապայմանագրային համաձայնագրեր:

Ծածկագիր. BRDE20161206001

R&D



Հորիզոն 2020. որոնվում են հանրային գնումների կազմակերպություններ, որոնք փորձ ունեն թափոնների և հողի վնասազերծման ոլորտում

Իսպանական գիտահետազոտական կենտրոնը, որը մասնագիտացած է թափոնների և հողի վնասազերծման տեխնոլոգիաների ոլորտում, աշխատում է H2020- SC5-26-2017(նախնական առևտրային գնումներ հողի վնասազերծման նպատակով) մրցույթի առաջարկի վրա: Ընկերությունը փնտրում է հասարակական գնումների կազմակերպություններ, որոնք փորձ ունեն թափոնների և հողի վնասազերծման ոլորտում:

Ծածկագիր. RDES20170131001

[EUREKA or Eurostars2] Որոնվում է գործընկեր Եվրոպայից՝ մշակված ծակոտկեն մետաղի տեխնոլոգիան էներգետիկ և բիո էներգետիկ նյութական արդյունաբերության մեջ գործարկելու նպատակով:

Կորեական համալսարանը մշակել է միկրո և նանո չափերի ծակոտկեն մետաղ՝ էներգետիկ բջիջների համար: Դրանք արված են տիտանիումից և նիկելից, և այդ տեխնոլոգիայի կիրառումը առավել լավ է իրականացվում, քան սովորական ածխածնային էլեկտրոդները: Համալսարանը նաև ձևավորել է կորաեկան կոնսորցիում և փնտրում է եվրոպական գործընկերներ վերը նշվածն առևտրայնացնելու համար: EUREKA կամ EUROSTAR2 ծրագրերն են նախատեսված 2017 թ. -ի մրցույթին դիմելու համար:

Ծածկագիր. RDKR20161226001

Eurostars. որոնվում են կրթական հաստատություններ, ընկերություններ, որոնք գնում են մասնագիտական կրթական դասընթացներ և զբաղվածության ոլորտի սոցիալական ցանցեր:

Ֆրանսիական ընկերությունը մշակել է առևտրային վերապատրաստման հարթակ, որն իրենից ներկայացնում է մարքեթինգային օպտիմալացնող միջոց՝ մասնագիտական կրթության ոլորտում: Որպեսզի այս հարթակում ակտիվացվեն տրամաշափումը և ալգորիթմների միջոցները, Eurostars ծրագրերի համար այն փնտրում է կրթական հաստատություններ, ընկերություններ, որոնք գնում են մասնագիտական կրթական դասընթացներ և զբաղվածության ոլորտի սոցիալական ցանցեր:

Ծածկագիր. RDUK20161005002

Տեղեկատվական տեխնոլոգիաներ



Գործարար համագործակցության առաջարկներ

SS և բիզնես խորհրդատվություն իրականացնող ընկերությունն առաջարկում է իր ծառայություններն իբրև ենթակապալառու

Միացյալ Թագավորությունում հիմնված բիզնեսն առաջարկում է SS և բիզնես խորհրդատվություն, այն աշխատում է փոքր ու միջին բիզնեսների հետ, որոնք չունեն իրենց SS ռեսուրսները, նաև աշխատում է մեծ ընկերությունների հետ, որոնք ցանկանում են լրացնել իրենց SS թիմը: Ընկերությունը ցանկանում է հանդես գալ իբրև աութսորսինգային մատակարար կամ ենթակապալառու եվրոպական երկրների այն ընկերությունների հետ, որոնք փնտրում է SS ծրագրային մենեջմենթ, ինժեներական աջակցություն, թեստային անալիզ, կիրքեր անվտանգություն, տվյալների վերլուծություն, վեբ դիզայն ու մշակում և այլն:

Ծածկագիր. BOUK20150929001

Ռուսական բժշկական ծրագիր մշակողը փնտրում է դիստրիբյուտոր

Ռուսական ծրագրեր մշակող ընկերությունը, որը մասնագիտացած է բժշկական նախնական դիագնոստիկ լուծումների մշակման ոլորտում, փնտրում է գործընկերներ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով՝ դրանք առողջապահական ոլորտում վաճառելու համար:

Ծածկագիր. BORU20160812004

SS համակարգի մատակարարն առաջարկում է հաղորդագրության մուտքի սարքավորում

Գերմանական SS համակարգի մատակարարը և շուկայում հաղորդագրության մուտքի սարքավորումների առաջատարն առաջարկում է իր իսկ մշակած լուծումը SS՝ հեռահաղորդակցության ոլորտի հնարավոր գործընկերներին: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BODE20160916002

Գործարար համագործակցության հարցումներ

Ընկերությունը փնտրում է կատարյալ մենեջմենթի ծրագիր մշակողներ

Ռուսական SS ընկերությունը Յարոսլավլի տարածաշրջանից, որը մասնագիտացած է մարդկային ռեսուրսների ավտոմատացման, աշխատակիցների գնահատման, ինչպես նաև ցանկացած բարդության կորպորատիվ էլեկտրոնային դասավանդման լուծումների տրամադրման ոլորտում, ԱՊՀ և ԵՄ երկրներում լիցենզիոն համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով փնտրում է կատարյալ մենեջմենթի ծրագիր մշակողներ:

Ծածկագիր. BRRU20160822001

Կոսմետիկա



Գործարար համագործակցության առաջարկներ

Հիգիենիկ և կոսմետիկ միջոցներ արտադրողն առաջարկում է իր ապրանքները

Բուլղարական ընկերությունը, որն արտադրում է կոսմետիկ և հիգիենիկ միջոցներ, առաջարկում է իր ապրանքները հնարավոր գործընկերներին, որոնք գործում են այդ ոլորտում: Հիմնական արտադրանքի մեջ մտնում են կանացի հիգիենայի մաս կազմող միջադիրներն ու տամպոնները, մազերի ներկերը, տղամարդկանց և կանանց համար նախատեսված կոսմետիկան, թաց անձեռոցիկները և օդի հոտազերծիչները: Ընկերության նպատակն է հաստատել երկարատև համագործակցություն դիստրիբյուտորների և/կամ առևտրային գործակալների հետ:

Ծածկագիր. BOBG20150514001

Երեխաների համար մարմնի և դեմքի խնամքի բնական միջոցներ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Ֆրանսիական ընկերությունը, որը մասնագիտացած է երեխաների համար կոսմետիկ միջոցների մշակման և արտադրության ոլորտում, առաջարկում է հավաստագրված,

մաշկաբանների կողմից փորձարկված բուսական ծագման բնական կոսմետիկա՝ նախատեսված երեխաների համար, սկսած 3 տարեկանից: Դրանք արված են զվարճալիքներով լի զբոսայգիներից ստացած տպավորությունից ոգեշնչված՝ կիրառելով համապատասխան բաղադրիչներ ու բույրեր:

Ծածկագիր. BOFR20151120001

Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ մաշկի համար նախատեսված օգոնացված յուղով կոսմետիկայի համար

Իտալական ընկերությունը, որը զբաղվում է մաշկի կոսմետիկայի նոր արտադրական հոսքագծի արտադրության և մարքեթինգի ոլորտում, իր բարձրորակ կոսմետիկայի համար կիրառում է լավագույն բաղադրիչներն ու ֆորմուլաները, որոնք իրենց մեջ ներառում են օգոնացված յուղի թթվածանային հատկությունները: Արտադրանքի տարածման համար թիրախ կարող են հանդիսանալ դեղատները, առողջարանական/ՄՊԱ սրահները:

Ծածկագիր. BOIT20151005001

Դեղագործություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Ընկերությունը փնտրում է տարածման/առևտրային գործակալության համաձայնագրեր

Պորտուգալական ՓՄՁ-ն նախագծու, մշակում և իրացնում է բժշկական սարքավորումներ՝ համատեղելով ինժեներիան և առողջապահությունը: Բժշկական սարքավորման համար ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ: Սարքավորումն իրենից ներկայացնում է ճնշման հարթակ՝ տեսողական կենսական հետադարձ կապով: Այս պորտուգալական ՓՄՁ-ն փնտրում է առևտրային գործակալներ՝ նոր բժշկական սարքավորումը ներկայացնելու

նպատակով, ինչպես նաև նաև այնպիսի դիստրիբյուտորներ, որոնք լավ տեղեկացված են ու գիտելիքներ ունեն ֆիզիոթրապիայի և վերականգնողական ոլորտում կիրառվող բժշկական սարքավորումների շուկայից:

Ծածկագիր. BOPT20160617002

Որոնվում է գործընկեր՝ վերքերի ապաքինման համար նախատեսված բժշկական սարքավորման լիցենզավորման համար

Չեխական հետազոտողը համալսարանական հիվանդանոցից մշակել է փշվող օդային բարձիկներով ակտիվ բժշկական սարքավորում՝ նախատեսված շարունակական և վերահսկման տակ գտնվող բաբախուն ճնշման համար: Սարքավորումը պետք է ընկալի մարմնի հատուկ մասերի ճնշումը, ինչը կարագացնի և կնպաստի վերքի բուժմանը, կօգնի անոթային համակարգին, ինչպես նաև կկանխի հեղուկի պահպանումը փափուկ հյուսվածքներում: Ընկերությունը ներկայացրել է արտոնագրային դիմում: Հետազոտողները փնտրում են գործընկերներ նոր սարքավորման լիցենզավորման համար:

Ծածկագիր. BOCZ20161107002

Ընկերությունը փնտրում է տարածման համաձայնագրեր ներդրողներին սարքավորման համար

Ֆրանսիական ընկերությունը, որը մասնագիտացած է բժշկական կրիոթերապիայի ոլորտի սարքավորման, ներդրողներին սարքավորման ոլորտում, փնտրում է տարածման համաձայնագրեր՝ ողջ աշխարհում: Ընկերության տեխնիկական եղել է մի շարք գիտական հրապարակումների, կլինիկական դիտարկումների, եզրակացությունների և ատենախոսությունների առարկա մի քանի ոլորտներում՝ սպորտային բժշկություն, ռևմատոլոգիա, ներբանաբուժություն, գերիատիկա, արտակարգ իրավիճակների բժշկություն և անասնաբուժություն:

Ծածկագիր. BOFR20161026001

Գործարար համագործակցության հարցումներ

Ընկերությունը, որը մատակարարում է ակնաբուժական համակարգեր, փնտրում է բիզնես գործընկերներ

Հունական ՓՄՁ-ն ծառայություններ է մատուցում ակնաբուժական կենտրոններին, հատկապես՝ ակնաբուժական հետազոտական սենյակների կարիքները հոգալու համար: Ընկերությունը հետաքրքրված է առևտրային կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցել այն ընկերությունների հետ, որոնք արտադրում և հունական շուկա են մատակարարում մրցունակ ակնաբուժական համակարգեր:

Ծածկագիր. BRGR20161205001

Այլ ոլորտներ



Գործարար համագործակցության առաջարկներ

Ընկերությունը փնտրում է օտարերկրյա գործընկերներ

Ռուսական ընկերությունը, որը գործում է ինքնասուսնավող նյութերի արտադրության ոլորտում (ինքնասուսնավող ժապավեններ, պլիտակներ, արդյունաբերական մակնշումներ, նշաններ), փնտրում է օտարերկրյա գործընկերներ առևտրային գործակալության և տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BORU20170124001

Մոմերի լայն տեսականի արտադրողը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ

Պորտուգալական ընկերությունը, որն արտադրում է մոմային արտադրանքներ, հատկապես՝ մոմեր և դիֆուզորներ և ունի փորձառություն միջազգային շուկայում, ցանկանում է ընդլայնել իր շուկան դեպի Եվրոպա: Ընկերությունն առաջարկում է բարձրորակ ապրանքներ նախատեսված մի շարք կիրառությունների համար. լուսավորում, դեկորացիա, արոմաթերապիա, կոսմետիկա: Այդ ապրանքները ներկայացված են նորարարական դիզայնով և բազմազան կոմբինացիաներով՝ ձևի, գույնի և բույրի առումով: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալություններ, տարածման կամ արտադրական գործընկերներ:

Ծածկագիր. BOPT20160531001

Ցանող և կտրող գյուղատնտեսական գործիքների մատակարարը փնտրում է գործընկերներ

Իսպանական ընկերությունը, որը մասնագիտացած է գյուղատնտեսական և այգեգործական ոլորտների համար նախատեսված կադապարների և ներարկման պլաստիկ ապրանքների արտադրության ոլորտում, փնտրում է գործակալներ, ովքեր կներկայացնեն իր բրենդը եվրոպական շուկայում:

Ծածկագիր. BOES20161212001

Ընկերությունը փնտրում է մանրածախ վաճառողներ և դիստրիբյուտորներ

Բրիտանական ընտանեկան ընկերությունը, որն արտադրում է ժամացույցներ, իր ժամացույցների տեսականու համար փնտրում է մանրածախ վաճառողներ և դիստրիբյուտորներ Եվրոպայում և ողջ աշխարհում: Ընկերությունը հաջողությամբ ծավալում է իր գործունեությունը Միացյալ Թագավորության շուկայում՝ վաճառելով իր ժամացույցները փողոցների մանրածախ առևտրային կետերին, ինչպես նաև՝ անհատ մանրածախ առևտրային կետերին: Ընկերությունը փնտրում է նաև արտահանման շուկայի դիստրիբյուտորներ:

Ծածկագիր. BOUK20150924004

Գործարար համագործակցության հարցումներ

Ընկերությունը փնտրում է նոր կենցաղային մաքրող միջոցներ և օրգանական հումք

Ֆրանսիական ընկերությունը մշակում է էկոլոգիական կենցաղային մաքրող միջոցներ շուրջ 35 տարի: 4 ապրանքային հոսքագծերը (բակտերիալ ֆերմենտների տեսականի, կենցաղային մաքրող միջոցներ, հոտազերծիչներ, բուսական հիմքով միջատասպաններ) արտադրվել և տարածվել են Եվրոպայում հիմնական մեծածախ առևտրականների և Ֆրանսիայի օրգանական խանութների միջոցով: Իր տեսականին բազմազան դարձնելու և պոտենցիալ նորարարությունն ավելացնելու նպատակով ընկերությունը փնտրում է եվրոպական մատակարար՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BRFR20150331001

Ընկերությունը փնտրում է կաշվի մատակարար

Միացյալ Թագավորությունում հիմնված ընկերությունը, արն արտադրում և նախագծում է ժամանակակից եզակի կաշվե թենոցներ կանանց և տղամարդկանց համար, փնտրում է բարձրորակ հաստ կամ բարակ կաշվի մատակարարներ: Օտարերկրյա մատակարարը կարող է լինել արտադրող կամ մեծածախ վաճառող:

Ծածկագիր. BRUK20170203001

Ընկերությունը փնտրում է նիկելից և քրոմից լարեր

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է ֆիքսված և դյուրավռվող ռեզինատորների արտադրության ոլորտում, փնտրում է նիկելից և քրոմից լարեր արտադրող՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով՝ դրանք իր արտադրանքում կիրառելու միտումով:


Ծածկագիր. BRRU20160118002

Դիզայները փնտրում է արտադրական համաձայնագրեր

Դանիական ձեռնարկատերը, ով նախագծում է սկանդինավյան կահույք և ինտերիերի դիզայնի համար նախատեսված պարագաներ, փնտրում է կեչու նրբատախտակից, փոփոխական կողմնակի ակրիլից արված վահանակներով լամպեր արտադրողներ:

Ծածկագիր. BRDK20170109001

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



Business Support on Your Doorstep

Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

Արդյունաբերական արտադրանքի շուկայահանումից առաջ մարդկանց և կենդանիների առողջության ոչ թունավոր ազդեցության վերլուծություն

Իտալական լաբորատորիան, որը հավաստագրված է Պատշաճ Լաբորատոր Գործունեություն (GLP) ծավալելու համար, գնահատում է առողջության վրա հնարավոր թունավոր հետևանքները, մինչև ապրանքները կշուկայահանվեն նորարական ապրանքների ին-վիվո և ոչ կլինիկական փորձարկումից հետո: Փորձարկվող ապրանքներն են՝ դեղեր, դեղագործական և անասնաբուժական ապրանքներ, թունաքիմիկատներ, կոսմետիկա, սնունդ և սննդային հավելումներ, արդյունաբերական քիմիկատներ: Լաբորատորիան փնտրում է արդյունաբերական գործընկերներ՝ դեղագործական, բժշկական, սննդի և կերի ոլորտներում տարածման ծառայությունների կամ տեխնիկական համագործակցության համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ref : TOIT20161024010

Վիրաբուժական գործիք՝ անոթային ստենդների հեռացման համար

Գերմանական համալսարանն առաջարկում է վիրաբուժական գործիք, որը հեռացնում է ստենդը բաց վիրահատության ժամանակ: Այս հայտնագործությունը հնարավորություն է տալիս առանց վնասվածքների հեռացնել ստենդը: Այն աշխատում է արագ և ապահով: Նախատիպն արդեն հասանելի է և հաջող կիրառվել է ստենդի հեռացման վիրահատության ժամանակ: Համալսարանը արդյունաբերական գործընկերներին առաջարկում է համագործակցություն լիցենզիոն համաձայնագրերի ներքո՝ առևտրային կիրառման համար, ինչպես նաև՝

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

Որոնվում է հողը ստուգելու տեխնոլոգիա

Կորեական ՓՄՁ-ն, որը զբաղվում է սարքավորումների կառավարմամբ, փնտրում է հողի անվտանգության ստուգման ոլորտում փորձառություն ունեցող գործընկերներ: Ընկերությունը փնտրում է գործընկերներ, ովքեր կարող են տրամադրել տեխնոլոգիա տնտեսական հիմքի սանդղակի վրա նախագծման, տեղադրման և ցուցադրության համար: Ընկերությունը որոնում է լիցենզիա և/կամ արտադրական համաձայնագրեր: Այն բաց է նաև տեխնիկական կամ հետազոտական համագործակցության համար:

Ref : **TRKR20161129007**

Նորարարություն թափոններում

Իտալական ընկերությունը, որը զբաղվում է թափոնների կառավարմամբ, փնտրում է նորարարական տեխնոլոգիաներ՝ արդյունաբերական թափոնների ռեսուրսների կամ վերամշակման համար: Ընկերությունը հետաքրքրված է տեխնոլոգիա մշակողների հետ տեխնիկական աջակցությամբ կամ տեխնիկական համագործակցությամբ առևտրային համաձայնագրերի ներքո համագործակցությամբ:

Ref : **TRIT20160213001**

Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2017 թ. -ի մարտ, ապրիլ, մայիս ամիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

Մարտ

01/03/2017	<p>Farmaforum 2017. Pharma, cosmetic and biotech brokerage event Madrid (Spain)</p> <p>Միջոցառման հիմնական նպատակն է բնական գիտությունների, դեղագործության, բիոֆարմայի, կոսմետիկայի և լաբորատոր տեխնոլոգիաների ոլորտում գործող ընկերությունների, հետազոտական ինստիտուտների, համալսարանների և այլ կազմակերպությունների համար հանդպման ֆորում կազմակերպելը: Մասնակիցներին կտրվեն հնարավորություններ համագործակցության և բիզնեսի վրա հիմնված տեխնոլոգիաների համար այն հանդիպումների միջոցով, որոնք ձեռք են բերվել երկկողմանի պայմանավորվածությունների համաձայն:</p>
08/03/2017	<p>Ecobuild Matchmaking 2017 London (United Kingdom)</p> <p>ՁեՅ-ը կազմակերպում է B2B համագործակցության հաստատման միջոցառում Ecobuildի շրջանակներում: Ոլորտները հետևյալն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Կայուն դիզայն ✓ Նորարարական և արդյունավետ էկո-տեխնոլոգիաներ ✓ Նոր շինանյութեր և տեխնոլոգիաներ ✓ Համակարգեր և սարքավորումներ՝ կիրառելով նոր էներգիայի այլընտրանքային աղբյուրներ

	<ul style="list-style-type: none"> ✓ Վերականգնվող էներգիա ✓ Կենսաէներգիա ✓ Սմարթ շինություն ✓ Խոհանոցի և լոգաստեյակի դիզայն:
16/03/2017	<p>ISH 2017 Brokerage Event Germany (Frankfurt am Main)</p> <p>ISH 2017-ը աշխարհում առաջատար տոնավաճառներից է նվիրված լոգարանի և սանիտարական, սարքավորման, ջեռուցման, օդափոխման, շինությունների և էներգիայի տեխնոլոգիաներին: Միջոցառման թիրախ հանդիսանում են արտադրողները, դիստրիբյուտորները, մեծածախ վաճառողները, մանրածախ վաճառողները, ծառայություններ տրամադրողները, արհեստագործները, ինժեներները և պլանավորողները վերոհիշյալ ոլորտներից:</p>
20/03/2017	<p>CeBIT 2017 Hannover (Germany)</p> <p>Այս միջոցառումը Հաննովերի ամենամեծ և միջազգայնորեն ներկայացված համակարգչային ցուցահանդեսն է: Թեմաները հետևյալն են՝ Մեծ և ամպային տվյալներ, Բիզնես էլեկտրոնիկա և սարքավորումներ, Ամպային պահեստավորում և տվյալների գործարան, Առևտուր և բանկային գործ, Հաղորդակցություն և ցանցային աշխատանքներ, ECM, Մուտքագրում / Արդյունք, ERP & HR, Անվտանգություն, հետազոտություն և նորարարություն:</p>

Ապրիլ

04/04/2017	<p>H2020 Brokerage Event: Nanotechnologies and Advanced Materials (N&M) Cambridge (United Kingdom)</p> <p>Սա մեկօրյա անվճար միջոցառում է, ուր կներկայացվեն մրցույթի առաջարկությունները, ներկա գաղափարները և Եվրոպական հանձնաժողովի ակնկալիքները: Այն առաջարկում է եզակի միջազգային ցանցային փորձ հետագա համագործակցության ամրապնդման համար:</p>
------------	--

24/04/2014	<p>EEN Brokerage Event during Hannover Messe 2017 Hanover (Germany)</p> <p>Համագործակցության հաստատման միջոցառում Hannover Messe 2017-ի շրջանակներում</p> <p>Աշխարհի առաջատար տոնավաճառ Hannover Messe-ն տեղի կունենա 2017թ. -ի ապրիլի 24-28, որի շրջանակներում կկազմակերպվի համագործակցության հաստատման միջոցառում՝ ընդգրկող տոնավաճառի բոլոր ոլորտները՝</p> <ul style="list-style-type: none"> • Արդյունաբերական ավտոմատացում. առաջատար տոնավաճառ գործարանային և մշակման ավտոմատացման, համակարգերի լուծումների և SS արդյունաբերության համար: • Թվային գործարան. առաջատար տոնավաճառ ինտեգրված գործընթացների SS ոլորտի համար: Էներգիա. առաջատար տոնավաճառ ինտեգրված համակարգերի և շարժականության համար: Արդյունաբերական ռեսուրսներ. առաջատար տոնավաճառ նորարարական ենթապայմանագրային լուծումների և թեթև շինարարության համար: • Հետազոտություն և տեխնոլոգիաներ. առաջատար տոնավաճառ R&D-ի և տեխնոլոգիական փոխանցման համար:
------------	--

Մայիս

09/05/2017	<p>EEN Brokerage Event at ICT Spring 2017 Luxembourg (Luxembourg)</p> <p>Համագործակցության հաստատման այս միջոցառումը Ձեր ընկերությանն առաջարկում է հետևյալը՝</p> <ul style="list-style-type: none"> • Երկօրյա բիզնես հանդիպումներ • հնարավորություն ստեղծելու ամուր համագործակցություն S2S ոլորտում • ցանցային լայն հնարավորություններ թվային ոլորտի առաջատարների, նորարարության ոլորտի մենեջերների, հետազոտողների, սկսնակների և այլոց համար • հնարավորություն գտնելու ճիշտ բիզնես գործընկերներ մեկ վայրում:
------------	---

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան:

Նշում: Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են: